ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» օգոստոսի 2024 թ. N 65-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Իտալիայի Հանրապետության «ԱՅԵՌԴԻ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հյուսիս-Հարավ ճանապարհահատված միջանցքի ներդրումային Ծրագրի Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի ճանապահահատված» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի շինարարության որակի տեխնիկական հսկողություն» գործունեության տեսակի «Տրանսպորտային ուղիներ» ենթատեսակի համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտի թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Տրամադրել Իտալիայի Հանրապետության «ԱՅԵՌԴԻ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հյուսիս-Հարավ ճանապարհահատված միջանցքի ներդրումային Ծրագրի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան ճանապահահատված» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի քաղաքաշինական փաստաթղթերի կազմում» գործունեության տեսակի «Տրանսպորտային ուղիներ» ենթատեսակի համար:

4. 3-րդ կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի փետրվարի 28-ը:

5. Տրամադրել Իտալիայի Հանրապետության «ԱՅԵՌԴԻ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հյուսիս-Հարավ ճանապարհահատված միջանցքի ներդրումային Ծրագրի Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ ճանապահահատված» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի շինարարության որակի տեխնիկական հսկողություն» գործունեության տեսակի «Տրանսպորտային ուղիներ» ենթատեսակի համար:

6. 5-րդ կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի փետրվարի 28-ը:

7. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.08.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ